

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ձր.

Վեցամսեայ . . . 6 Ձր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ձր.


Վեցամսեայ . . . 7 Ձր.

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50Տօլար »

ԿԱՆԽԻԿ

Մանուցման սոդր
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՊՐԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

Ir. Yeznik

VARNA (Bulgaria)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравуникъ

ВАРНА

Գրութեանք եւ լին
տրութիւն

ԿՈՎԿԱՍՍԸ

Թիֆլիս 1 Ապրիլ

Կովկասու քաղաքական բաժնի գլխավոր վարչութեան տեղապահ ժեներալ-լէյտէնանտ Մալախան Կովկասու տղաբանական թեման ուղղած է հետեւեալը .

«Մարտ 30 թուականով Նորին Բարձրութիւն Կովկասի Փոխարքայ ժեներալ-աւտուտանթ իշխան Վարանցով Տաշքով հետեւեալ հաւագիրն է ուղղած .

«Քաղաք Կայսեր կամքով իմ սիրելի Կովկասին վարչութեան պետի պաշտօնին կանչուած եմ, դժբաղդաբար այնպիսի ժամանակի մը մէջ ուր ամէն օր շարունակաբար խառնակութեանց , կողոպուտի և անկարգութիւններու լուրեր կը տեղան : Իբրեւ հին զինուոր , ինձի համար անկարելի էր մերժել ծառայութեան կոչը՝ կուրի ժամանակ , այնու ամենայնիւ խորապէս համոզում կզգամ մէջս թէ կայ կարելիութիւն խաղաղութիւնն ու անդորրութիւնը վերահաստատելու :

«Ես հաւատացած եմ որ Կովկասցիները հաւատարիմ հպատակներ են Կայսեր՝ որոյ համար բոլոր տեղային ազդեցութիւնները անխտիր սիրելի են ու թանկագին : Բոլոր համայնքը , առանց խառնութիւն գնելու կրօնի և ազգութեան , պետի առաջնորդեմ գործնականապէս խաղաղ կենակցութեան հայրենի երկրին մէջ :

«Կարգն ու կանոնը խաղաղ ճամբով կիրարկելու համար համայնքի աշակցութիւնը անհրաժեշտ է : Կը հաւատամ ժողովուրդին իմաստութեանը և համոզուած եմ որ անհանդարտ մասին համամիտ չէ ազգաբնակչութիւններու լուրջ մասը :

«Նորին Վեհափառութեան հրամանով բոլոր ազգաբնակչութիւններու ներկայացուցիչներէն կազմուած խորհուրդով մը պիտի գործեմ : Այստեղ պիտի մըտնեն ընտրելիներ պալատէն , քա-

ղաքներու , գիւղական հասարակութեանց և Օրթոթոքս , Արմէնո-Գրիգորեան և Միսլիմանական ներկայացուցիչներ : Խորհրդակցութիւնով պիտի առաջարկուին ձեռք առնուելիք անհրաժեշտ միջոցները , որոնցմով առաջը պիտի առնուին հարստահարութեանց կողմուտի և անկարգութիւններու , պետի պարզեմ ըստ կարելոյն դատաստանական գործառնութեանց կիրառութիւնները և միջոց պիտի տամ գիւղական համայնքներու նմանօրինակ դատաստանական բարեփոխուած դրութիւններու Բացի այս , ես պիտի ձեռք առնեմ բոլոր ինձի կախում ունեցած և մինչև հիմայ անորոշ մնացած գործերը :

«Հայ եկեղեցիներու կալուածներին խնամակալութիւնը արքունի կառավարութեան փոխանցուած ըլլալուն դէմ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խնդրագրին վրայ բարձրագոյն հրամայուած է ինձ վերաբնել :

«Ես հաւատացած եմ որ բոլոր կառավարական բաժնի ծառայողները երկար խորհրդակցութիւններով եւ լուրջ համոզումներով և իրենց բոլոր ոյժովը կը գործեն այս ծանր ճգնաժամի մէջ աչքի առջեւ ունենալով Կովկասի նախկին փայլուն վիճակը :

Կարողիկ . պատգամաւորութիւնը
Վարանցով-Տաշքով իշխանին մօտ

Տ. Ներսէս Արքեպիսկոպոս և Տ. Մեսրոպ աւագ քահանայ Հայոց Կաթողիկոսին կողմէ իբր պատուիրակներ Բէք-բապուրկի մէջ ներկայացած են Կովկասի նորընտիր փոխարքային : Իշխանը Հայոց մասին բերկաւթ խոստումներ ըրած և արտօնած է իր այդ խոստումները հաւագաւ հաղորդել Ս. Օծովութեան Ահա այդ հաւագիրը

«Յունիս 12ին եղած կարգադրութիւնները , իշխանին համոզումովը , պիտի վերաբնենուին ու պիտի փոխուին , ինչ որ իշխանին

ալ շերտ փոփաքն է : Արքեպիսկոպոս եկեղեցականներու դատերը ամենամօտ ժամանակի մէջ պիտի լուծուին : Իշխանը մեծ յոյս յայտնեց թէ գարնաններու խընդիրն ալ բարեփոխուած պիտի կըրէ : Ինք կը յաւայ թէ անձամբ Ձեր Սրբութեան հետ խորհրդակցելու առիթ պիտի ունենայ : Թուա հաւագիր . գործակալութիւնը Եզրիաւթութեամբ կը հաւորդէ որ փոխարքային խօսքերը լաւագոյն տպաւորութիւններ թողած են Կովկասի բնակչութեան վրայ : Հասարակութեանց լայն շրջանակներու մէջ խնդակցութիւն կը յայտնուի արմատական բարենորոգումներ ներմուծելու անհրաժեշտութիւնը փոխարքային ճանչնալուն առթիւ , որով կարելի կըլլայ փոխադարձ վստահութեան սկզբունքին վրայ հաստատել համայնի ուժերը :

Այս ուրախակց տեղեկութիւնները կողմուրեն բազմատանջ հայ ժողովուրդին իւրաքանչիւր համակիրի ոգին : Մենք մասնաւորապէս ուրախութեամբ և գոհութեամբ այս լուրերը կը հաղորդենք հայ ժողովուրդին «Իրաւունք» միջոցաւ , և կապութեանք՝ Աստուած տար , որ հայ ազգին երջանկութեան արշալոյսը ապեց սկսէր :

Բ. ՏՐԱՆՍԻԼԻՎ

ՄԵՐ ՕՏԱՐ ԲԱՐԵԿԱՍՏԵՐԸ

Նշանաւոր Անգլիացիներէ կազմուած «Հայաստանի Բարեկամներ» ըր՝ անուն ընկերութեան կողմէ խմբագրութեանս ղրկուած է հետեւեալ նամակը , որուն ներփակեալ տետրակը մեր նախորդ թուով սկսած էինք հրատարակել և այս թուով կը վերջացնենք :

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՍՏԵՐ

47 Վիքթորիա փողոց

Ռեկուզիտիսդր 1 Ապրիլ 1905

Սիրելի Պարոն
Ներսիսեայ տետրակը ինքնին պերճաւոր է :

Մենք ցանկացող Ձեր տնտեսող հայրենիքին բարօրութեան , ջերմասէս կը խնդրենք ձեզին , որ ոչադրութեան կարգաւ գայն , եւ ձեր ձեռքէն եկածը ի գործ դնէք , հետեւեալու համար այն աղետը որուն երկիւղալի գուշակութիւնը կընէ սն :

Մենք լաւ համոզուած ենք թէ այս տետրակը գրողը կը սիրէ Հայը եւ Հայաստանը եւ թէ անք միակ փափաքն է հայրենի օգնել կարելի եղած լաւագոյն միջոցներով :

Այս տետրակէն : րիկնք՝ ձեզի եւ քա՛նի հատ :

Ձերդ հաւատարմութեան

(Տիկին) ՄԱՌԻ ՀԻՔՍԸՆ

Անդամ Գործ . Ժողովոյ

«Հայկական խնդրոյն մէկ քանի կողմերը» խորագրով մեր նախորդ և ներկայ թուով թարգմանաբար հրատարակուած այդ տետրակի հեղինակը Ամերիկեան Պարտ ընկերութեան միսիօնարներէն մին է , որ 30 տարիներէ ի վեր Վանի մէջ հաստատուած և շատ մը առիթներու մէջ տեղւոյն և շրջակայ գաւառներու մեր ազգայնոց բարեփոխութեան համար անհրաժեշտ է ու կընէ դեռ : Իր գէպի Հայերու տաճած բարեպաշտութիւնը բնաւ կառկածի տակ չըլլալով և այդ մասին մեր Անգլիացի Բարեկամներու ընկերութեանէն ևս յանձնարարուած ըլլալով , մենք ալ մեր ընթերցողներու ուղղութեանը և խորհրդածութեանը կը յանձնենք այդ տետրակի պարունակութիւնը որ իր շատ մը գծերով իրաւունք կուտայ մեր այն ճաշկուտներուն որոնց տաւրիկայ եղան Սասունի աղետը ստեղծողները :



ԲՈՂՈՔ
ԿՈՎԿԱՍԻ
ԶԱՐԴԵՐՈՒՆ ԴԷՄ

ԲԱՐԻՉ 14 ապրիլ

Երեք օր առաջ գրած նամակիս մէջ կըսէի թէ Դոր մեծ գումարում մը «Սօսիթի Սալանդի» արահներուն մէջ պէտք էր տեղի ունենար, բողոքելու համար Ռուսիոյ ու Կովկասի ջարդերուն դէմ :

Այդ գումարումը տեղի ունեցաւ երէկ երեկոյ, մեծ բազմութեան մը առջեւ, որ նմանը չտեսնուած խնայողութեամբ Ռուսիոյ ու անոր զինուորիկցի ձրանաւոր կառավարութիւնները պատապառնեց :

Գումարումին կը նախագահէր բերօքէսէօր Բէնլըվէ . ատենսխոսանքէն Պ. Ֆրանսիս տը Բրէսանսէ Ռուսիոյ արդի շարժումներուն վրայ երկու ժամու չափ խօսեցաւ, ձաղկելով ֆրանսական կառավարութիւնը Ռուսիոյ զինակցութիւնը ընդունելուն համար :

Բարիգեան ուսուցիչներուն ծպտեալ մէկ քանի մարդիկ, որ գումարումին մէջ կը գտնուէին, ջանացին խանդարել ժողովը . հարկ եղաւ որ ձայնիւրին կարեն, ու անշուշտ եթէ իրենց դուրսէն ոստիկաններ օգնութեան չի գային, ներկաներէն լաւ մը իրենց արժանի պատիժը կ'առնէին :

Պ. Գիյառ այ խօսեցաւ, իրեն մասնաւորաբար ինքի առնելով Կովկասի ջարդերը :

Անցեալ նամակիս մէջ մոռցեր էի ըսիլ դէպք մը, որու վրայ այս օրեր Բարիգի մէջ շատ կը խօսուի :

«Բէ վալմի իր» բանախօսութեան մէջ, Պ. Գիյառ խօսելով ուս աշխատակցին վրայ որ թրքական սահմանադրութեան ներս խուժող հայ յեղափոխականները սպաննել տալէ ետք, իր լուսանկարը քաշել տուեր էր, կաւեցնէր որ այդ լուսանկարը Բարիգի բոլոր պատերուն վրայ պիտի փակցուի :

Իրաւ ալ, այս երկուշաբթի օրը, Բարիգի բոլոր կարեւոր փողոցներուն վրայ կար կարմիր թուղթի վրայ պատկեր մը, ուր ուս սպայ մը, դիակներէ չըջապատուած, ինքզինքը կերուխուժի տալու վրայ է թուղթը կը կրէր «առնական յողմանակներ» տիպոսը, իսկ պատկերին տակը մանրամասն տեղեկութիւններ տրուած էին այն գէպքին պարագաներուն վրայ : Բայց ոստիկանութիւնը այդ լուսանկարը շատ տեղի իր մարդիկներուն պատուել տուեր էր . հակառակ այս պարագային, Բարիգիները մեծ հետաքրքրութեամբ այդ պատկերը չըրջապատած, անոր պատուտեալ կտորները հասկնալ կը ջանային :

Պ. Գիյառ, իր վերջին ատենախօսութեան մէջ խափառ գաղափարտեց ոստիկանութեան այս վարմունքը, ու ըսաւ որ նոր պատկեր մըն ալ պիտի փակցունեն, որ կը ներկայացնէ Պաքուի մէջ յղի հայ կիները սպաննող ռուս զինուորիկներու խուժ մը :

«Բանի որ, ըսաւ, մեր զինուորիկն է Ռուսիա, լաւ մը գիտնալ որպէս զի հանրապետական ձրանսան հպարտանալու հաճոյքը ունենայ, թէ մեր զինակիցին բանակները ինչպիսի յաղթանակներ միայն չանել զիսին »

Պ. Գիյառի այս խօսքերը մեծ խանդառութեանց տեղի տուին : Արդէն սրահին ունկնդիրները ընկերվարական ու անիլխանական տարրերէ կը բաղկանային :

Ռուսիոյ վերջին գէպքերուն վրայ ընկերվարականները սկսած են ամէն տեղեր բողոքի միջոցներ գումարել :

Գօնպի նախարարութեան օրով ժողովս ետ կը կենար իր պաշտպանած կառավարութիւնը անհանգիստ ընող միջոցներու մասնակցելէ, առնակ որ, ռուս մէկ քանի յեղափոխականներ Բարիգէն արտաքսուեցան ու ֆրանսացի մէկ քանի անիլխանականներ ալ բանտարկուեցան, առանց ժողովի ու անոր կուսակցիներու կողմէ բողոք մը ըլլալու :

Բայց այժմ, Ռուսիոյ դահլիճին իշխանութեան անցնելէն ի վեր, ժողովս ու Բրէսանսէ թողած են իրենց այդ գալթակալից վարմունքը, ու այժմ ֆրանսական կառավարութեան դէմ ամենաբողոքն ուսուցիչներու կը մասնակցին :

Թորակից

ԹՈՒՆԻՔԻՈՅ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Ե.

ԾՈՂԱՅԻՆ ՍՊԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թուրքիա սկիզբէն ի վեր գրեթէ երբէք ծովային պետութիւն մը չէ եղած : Թէպէտ ժամանակին Արշիպիղազդարնի տրուած եւ Միջերկրականի, Մարմարայի ու Սեւ ծովուն եզերքը ընդարձակ կալուածներ ունեցած է եւ դեռ կարիւր մաս մը ալ ունի, բայց այդ ամենը ցամաքային մասին հետ բաղդատմամբ նուազ կարեւորութիւն ունենալով եւ մասնաւոր իր նախադրեցն ծովապետութեան օրինակելի դաս մըն տեսած չըլլալով, միշտ տկար գտնուած է այդ կէտին մէջ : Սակայն միւս առանց երկարօրէն ծանրանալու այդ պատմական շրջանին վերայ, անցնինք ներկային :

Դարերու երկար շրջանին խորքունին մէջ սուղուած Թուրքիան, կարծեւ մոգական դաւադանի մը ազդեցութեամբ, իր վիճակաւ չի ջնկափառ ազդեցութիւնը վերանորոգելու համար, անցեալ տարի կարգ մը ձեռնարկներու սկսաւ եւ ատիկա եղաւ հետեւեալ պարագաներու տակ :

Չենք գիտեր զաղանի ինչ համաձայնութեան մը վրայ, Պոլսոյ Անգլիականատան նաւային կցօրդ Գրեյսպետ Գիլի, անցեալ տարի, երբ Անգլիայէն դէս նոր եկած էր, թեւեւ այս մասին յատուկ հրահանգներ ունենալով սակայն, կայսր, յատուկ Իրաւով եւ Օսմ. ծովային սպայի մը ընկերակցութեամբ այցելեց Արքունի նաւարանը, Հէյպլի կղզիին ծովային վարժարանը, ինչպէս նաեւ Տարտանէլի եւ Միտիլի Օսմ. մարտանաւերը, ու այս ամէնը մանրամասն քննութեան մը բովէն անցուց : Եւ թեւեւ ինչ որ պիտի տեսնենք ներկայ գրութեան մէջ մարտանաւերու շինութեան եւ նորոգութեան մասին, Անգլիացի այդ գնդապետին թելադրութեամբ ձեռնարկուած ըլլայ :

Բայց մանր մունր մարտանաւերէ

Թուրքիա ունի մօտաւոր.պէս 16 զրահաւոր եւ յաճախ, բոլորն ալ հին ոճով շինուած բայց անոնց ամենքն ալ նորոգել տուաւ հետեւեալ կերպով «Մէսուտիյէ» զրահաւոր Անսալտո նաւարանին մէջ նորոգել տուաւ եւ «Ասարը Թէվֆիգ» զրահաւորը՝ Գրեյսի նաւարանին մէջ, Սակայն տեսնելով թէ այս կերպով շատ դժուար պիտի ըլլայ այդ բոլոր մարտանաւերու նորոգութիւնը, Անգլիոյ եւ Իտալիոյ նաւարաններէն կարգ մը ճարտարագէտներ եւ զործաւորներ վարձեց ու Արքունի նաւարանին մէջ նորոգել տուաւ միացեալ մարտանաւերը, ինչպէս նաեւ մէկ թնդանօթակիր եւ մէկ թորփիլահալած :

Բայց բոլոր այս մարտանաւերուն նորոգութեանը եւ յատակները մաքրելու համար Պոլսոյ Արքունի նաւարանը անբաւական ըլլալուն, Նիկիոյ մէջ ծոցին մէջ յատուկ աւազան մը շինելու համար, Արմըս-դրոնկ-Անսալտո նաւարաններուն Անգլիացի եւ Իտալացի ճարտարագէտները հոն գացին թուրք սպայի մը հետ, առաջադրուած աւազանին յատակածելը պատրաստելու համար : Սակայն Սուլթանի փառասիրութիւնը սոսլափով չը գոհացաւ : Յիշատէլֆիոյ նաւարանին երկու յաճախ շինել տուաւ, Անգլիոյ 2 յաճախ եւ մէկ թնդանօթակիր ու շինովայի Անսալտո նաւարանին մէջ ալ 7 թորփիլահալած շինութեան, որոնց իւրաքանչիւրը 35,000 ոսկի արժեց թուրք կառավարութեան :

Հետաքրքիր ընթերցողը թեւեւ կը յիշէ թէ՛ երբ այդ մարտանաւերը աւազանով Պոլսի բերդեցան ինչ խրախճանութիւններ տեղի ունեցան : Այդ մարտանաւերն բերդ Անգլիացի, Ամիրիկացի եւ Իտալացի նաւազներն ու սպաները յատուկ պահուկներու մէջ հիւրասիրուեցան, կայս. հացկերոյթի մատակարար կորզելով իրենց տեղերը վերադարձան : Ու բոլոր այս նորաշէն եւ թէ նորոգուած մարտանաւերը Գրեյսի արագհարուած թընդանօթներով զինուեցան, որոնց զործածութիւնը Եւրոպացիք ուսուցին 6-7 շաբաթներ փորձեր կատարելով :

Ու անոնցմէ զաւ Յիշատէլֆիոյ Գրամը նաւարանին 700,000 ոսկի արժողութեամբ զրահապատ յաճախ մը, Արմըսդրոնկ նաւարանին խոշոր յաճախ մը եւ զպրոց —մարտանաւ մը ու Մէլանիլի նաւանգին ծովազերներու հսկողութեան համար 8 եղբարպահ մարտանաւեր (պահականոց) յանձնարարուած են, նոյնպէս անոնց համար հարկ եղած ելեքտրական ցոլացուցիչներն ալ պիտի գնուին :

Ֆրանսա նախանձելով ուրիշ տէրութիւններու այս շահադիտութեանէն, ինք ալ քիթ մէջ խոթեց, ինչպէս կըսեն ժողովրդական լեզուով, եւ 2 զրահապատ յաճախ յանձնարարութիւն ձեռք ձգեց :

Իրեն ապագային նախատեսութիւն, այս մարտանաւերու նորոգութեան համար 15,000 թօնոնց շարժուն աւազան մըն ալ բերուեցաւ Եւրոպայէն : Միւս կողմանէ Պոլսոյ Արքունի նաւարանն ալ անգործ չը մնար եւ երեք թորփիլահալերու շինութեանը կախատի :

Կայս. Իրաւէ մըն ալ կը հրամայէ Գումարանի (Կարմիր ծովու եւ զերք) Արքունի նաւարանն ընդար-

ձակել, պէտք եղած մեքենաներն ու զործիքներն ալ բերել տալով, որպէսզի Կարմիր ծովու մէջ գրաւ նուող Օսմ. մարտանաւերն հոն նորոգուին, փոխանակ միջոցն Պոլս կամ Նիկիոյ դիւղերը :

Անցեալները Բորթ Սախաի նաւահանգստին ընդարձակութիւնը պատճառաւ, քարափին մօտ գտնուող օսմ. նաւատորմին անուրի միջոցներ ընկերութեան յանձնել պէտք եղաւ : Այդ ատեն թուրք կառավարութիւնը պայման դրաւ ընկերութեան հետ, այդ միջոցները չէնք ուրիշ տեղ մը վերաշինելու ընկերութեան ծախքով : Ասիկա թէպէս ինքնին անկարեւոր բան մըն է, բայց երբ խնդիրը հոգեբանօրէն քննելու ըլլանք, տարբեր դոյն պիտի առնէ : Մէյ մը որ Թուրքիա օտար հողերու մէջ դառնաւ իր շահերը պաշտպանելու նորօրինակ ձեռնարկ մը կընէ եւ Բ. Ե. այն ամուրի կայանը սպալայի իր ծրագիրներուն համար օգտակար կը ներկայտէ, ինչ որ նկատելի կէտ մըն է անշուշտ :

Բոլոր այս սպառազինութիւնները մօտաւորապէս 7 միլիոն օսմ. ոսկիի բացառիկ ծախք մը պատճառեցին Թուրքիոյ, որուն տակէն ելլել քիչ մը զժողով խնդրէ : Թուրք կառավարութիւնը իր պաշտօնեաներուն ամսականները իւրացնելով, կամ Եւրոպայի մէջ Արաբ Թերթի մը հանգանակութիւնով, այս բացուած ծախքը չը կրնար գոցել անշուշտ, թէպէտ ժամանակէ մը ի վեր այլ եւ այլ խնայողութիւններ ընելով քիչ մը գրամ հաւաքած է ան պատեարազմի մը նախատեսութեանը համար, բայց ասոք ամենք տեղ մը գտնելով, զարձակ չեն կրնար փոխարինել եղած ծախքերը . ուրեմն հանրային պարտքը նոր յաւելում մըն ալ պիտի կրէ :

(Թուրիս) Արեւելոյ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ
ՄԵԿ ՔԱՆԻ ԿՈՂՄԵՐԸ

ՎԵՐ. Կ. Գ. ՌԵՆՈԼՏՍ

30 ամեայ Միսիոնար Ի Վան

(Շար. Ասիոյի քիւն եւ վերջ)

Վերոյիշեալ տեղեկագրին մէջ Պ. Պրէյսֆօրտի յօդուածը այդ ժամանակներուն վրայ ընդհանուր տեսութիւն մը կուտայ : Զայն ուշ ուշով կարդացողը պիտի տեսնէ թէ Սուլթանի քաղաքականութեան փոփոխութիւնը Հնչակեաններուն յեղափոխական փրօքիականտային ընական արդարքն էր եւ թէ «Համիտէ» հեծելազօրքերուն եւ ճնշումի ուրիշ մէթոտներու կազմակերպումին առիթը այս յեղափոխական զործողութիւնն եղաւ : Որչափ աւելի այս վերջինը երեւան ելաւ այնչափ հայրատահարումի քաղաքականութիւնը թուրքերու կողմէ զօրացաւ եւ յանգեցաւ 1894-6 շաբաթներուն ողորդ քաղաքական աշխարհը սոսկապետցին եւ որոնց անմոռանալի պատմութիւնը վերոյիշեալ յօդուածին մէջ յիշուած է : Անշուշտ ճշմարիտ է թէ 1894 Սասունի կոտորածէն առաջ, յեղափոխական վարդիները բացէ ի բաց բան մը ըրած չէին

որ մէկ քանի մարդ ձերբակալու-
լէ անդին անցնելու կամ զինուո-
րական միջամտութիւն մը ընելու
արդարացի ամենափոքր առիթ մը
տուած ըլլար : Անշուշտ ոչինչ կըր-
նար արդարացի ալ անհեղինակ
միջամտութիւն կամ երկու տարիներուն
խօսքութիւնները : Բայց թէ՛ թուր-
քերուն քաջածանօթ նկարագիրը ,
պիտի առաջնորդէր մեզ ակնկալե-
լու վայրագութեան պոթկում մը
երբ գրգռուէր . ապիկա ճշմարիտ է :
Հետեւաբար հայոց կողմէն ամէն
ինչ որ ասանկ արդիւնք առաջ պի-
տի բերէր վերջին աստիճան ան-
միտ եւ անպոթ քան էր : Թուր-
քերը ամէն տեղ կըսեն թէ հայե-
րը իրենք պատճառ եղան իրենց
կոտորածներուն : Իրաւի՝ որքան ալ
այդ կոտորածները կանխամտածուէն
եւ խնամքով պատրաստուած էին,
որքան ալ այս քսմանիկ պատ-
մութեան բարբարոսութիւնը եւ
խօսքութիւնը կրնանք եւ պարտինք
զատապարտել՝ դարձեալ ճշմարիտ է
թէ զորազորուած վայրենութեան
այս էջը չպիտի գրուէր՝ եթէ յե-
ղափոխականութիւնը թուրքերը զը-
գառ չըլլար : Կոտորի վերոյիշեալ
հայաստանական ժողովին տեղեկագրին
մէջ կայ «նոր կոտորածներ» վերնա-
գրով յօդուած մը որ այս տար-
ւան Սասունի եւ Մուշի զէպքերը
կը մանրամասնէ : Իմ ձեռքս գրա-
նուած վստահիկ տեղեկութիւննե-
րէ գտանելով՝ կարծեմ այդ յօդ-
ւածին մէջ չափազանցութիւններ
կան քերտերու խաղցած գերին
եւ սպաննականութիւն մասին :
Բայց ընդունելով իսկ թէ զինու-
որներուն արարքը բաւական չըն-
գործէն պատճառաւ են , դարձեալ
բացորդ իրողութիւն մըն է թէ յե-
ղափոխականներու խումբեր՝ սահ-
մանադուրէն անցնելով՝ զեռ խառ-
նակութիւնը չսկսած՝ ժամանակէ մը
ի վեր Սասունի մէջ կը հաւաքուէին
եւ հոն գնացած էին—ինչպէս որ
իրենք կը խոստովանէին ընել տա-
լու կառավարութեան ճիշդ ինչ որ
կապառուէր որ անիկա ընէր եւ
ինչ որ իրականացէր ալ ըրաւ :
Ճշմարիտ է նաեւ թէ այս յեղա-
փոխականները ստիպեցին Մուշի եւ
Սասունի խեղճ գերդասերները զէնք
գնելու յաճախ իրենց անասունները
եւ ուրիշ ամենէն էական ստացուածք
ները ծախելով : Եւ թէ կառավա-
րութիւնը հաւաքեց այս զէնքերը
այնպէս որ անոնք միջոց եղան
մահմէտականները զօրացնելու եւ
քրիստոնեաներուն վրայ պատուհա-
սեցնելու : Կարծեմ ոչ ոք պիտի ու-
րանայ թէ այս տարուան զէպքը
տեղի չպիտի ունենար՝ եթէ աղքա-
տամբ խումբերը մեծ բազմութիւնով
չհաւաքուէին եւ հետեւաբար ճշմա-
րիտ է թէ «հայեր իրենք պատճառ
եղան կամ զէնք առիթ տուին այս
ջարդին» : Նմանօրինակ քաղաքակա-
նութիւն մը սկսած է հիմա վա-
նի մէջ : Մեր բարի վալին , Թահիր
փաշան , չուզեր հոս ունէ կոտո-
տորած կամ խառնակութիւն : Իր
վարժունքը՝ այս նկատմամբ առատ
ապացոյց տուած է : Բայց հակա-
ռակ իր քանքերուն՝ այս խումբե-
րուն ներկայութիւնը՝ առանց ի-
րենց կողմէն յայտնի բռնութեան
մը ինքնին քաղաքը կոտորածի մը
զանալէժին մօտեցուց եւ ժողովուր-
դը շարժեց մը ահ ու սարսափի
մէջ պահեց եւ վերջեցիկ Նարեկ
գերդին աւարտումը եւ հրդեհումը
ինչպէս նաեւ քանի չափ բնակիչնե-

րու սպանումը առիթեց : Վալին այս
վերջին ոճերին հեղինակները լաւ
պատճեց : Բայց անկարելի է ակնկա-
լել որ այս խումբերը հոս մնան եւ
գարնան դէմ ընդհանուր խառնակու-
թեան մը պոթկումին վստահը չը
սպառնայ շարունակ : Բայց այնպէս կը
կարծուի թէ երբ գարուն դայ՝ յեղա-
փոխականները իրենք պիտի նախա-
ձեռնարկ ըլլան եւ քան մը ընեն որ
թուրքերն ալ գործի պիտի մղէ : Այս
ամէնը կըլլայ երբ անցնալին փորձա-
ռութեան լաւ պիտի թէ ասով կը
փութացնեն ընդհանուր կոտորած մը
առաջիններէն շատ աւելի ընդարձակ
մահացու եւ անագորոյն : Կուղիմ հար-
ցնել թէ ասանկ վարժունք մը որա-
կերու հաւար կա՞ն մեղմագոյն բա-
ռերքա՞ն «ամբողջական» կանխամա-
ծուած անօգուտ մարդասպանութիւն» :
Այս գրուածքին նշանակն է՝ ոգ
նեւ որ եթէ կարելի է իմ երկրորդ
հայրենիքին (Վան) սպառնացող այս
վտանգին առջեւ անոնք : Ես կը
ճանչնամ ժողովուրդը որուն մէջ 30
տարի ապրեցայ եւ կը սիրեմ զայն :
Անոնցմէ հայրերաւորներ՝ մեր դպրոց-
ներուն մէջ իմ հոգատարութիւնս վա-
յելած են : Անոնցմէ հազարաւորներուն
ընձեռած եմ բժշկական եւ ուրիշ կար-
գի խնամք :
Ես անոնք կը նկատեմ իբրեւ իմ
դարցիներս եւ հայրենակիցիներս եւ
ինձ դժուար է մասնել սա կարե-
ւորութեան վրայ որ որ մը նորէն
պիտի տեսնեմ այս փողոցները ա-
րեւմտող , այս տունները բոցերու
ճարակ եղած , այս բարեկամները
աչքերուս առջեւ մորթուած : Ես
կատարելագէտ վստահ եմ թէ ա-
սանկ քան չպիտի պատահի՝ եթէ
յեղափոխականները առիթ չտան :
Սա ակնհայտ քան է որ երկրին
մէջ գտնուող մարդոց շնանք
իրենց այս ընթացքն ետ կեցնե-
լու համար կոչում ընել անօգուտ
պիտի ըլլայ : Ահա այս պատճառով
ես կոչում կընեմ տրտախոսմանի մէջ
գտնուողներուն որոնք թերեւս կա-
րող են կացութեան վրայ ազդելու ,
խառնակիչները ետ կանչելու եւ
հազարաւոր անմեղ մարդոց , կիւնե-
րու եւ տղայոց կեանքին սպառ-
նացող վերահաս վտանգը արգիւն-
լու : Չեմ կարծիր որ Եւրոպայի եւ
Ամերիկայի ազնուասիրտ հայասե-
րները որոնք այնքան վեհանձնորէն
աշխատեցան այս երկրին կարօտ-
եաներուն օգնելու կը հասկնան որ
այս շարքին գալը պիտի փութա-
ցնեն խառնակութեան համար պա-
տախախտու եղողները քաջալերե-
լով :
Գալով Լոնտոնի ժողովին նման
գումարումներու հաւանական արդիւն-
քին՝ պիտի ըսեմ որ եթէ անոնք մը-
ղեն անմիջական եւ իրապէս ազդե-
ցիկ գործողութեան որ բարեկարգու-
թիւն յառաջ բերէ՝ աւելի վիստակար
կըլլան քան օգտակար թուրք կա-
ռավարութիւնը գրգռելով եւ իր ա-
ռարկելի մեթոտներուն մէջ հաստա-
տելով :—Այսքան տարի հայոց ի նը-
պաստ աւիրաւորութիւն ընելէ վերջ
այնքան քիչ արդիւնք գոյացած է որ մարդ
կրնայ հարցնել թէ այս տեսակ
գործին օգուտը ի՞նչէ : Թէ մարդ այդ-
պէսի գումարումներէն որքան բարեւ
կրնայ սպասել՝ այդ գործով զբաղողնե-
րը ինձմէ աւելի լաւ կրնան դատել :
Ամեն պարագայի մէջ սա տեղական
խառնակութիւնները պէտք է անմիջա-
պէս դադարին : Թող լաւ նկատի առ-
նեն թէ ով որ ուրիշները վայրագ գոր-
ծեր ընելու կը գրգռէ անոնցմէ նուազ
մեղաւոր չէ :

Թող ներուր ինձ պեռ մէկ քանի դի-
տողութիւններ ալ ընել այս շարժումին
ընտրութեան ու ազդեցութեանը նկատ-
մամբ : Նախ ի՞նչ եղած է անոր բարո-
յական ազդեցութիւնը ժողովրդին վը-
րայ : Այդ շարժումն առաջին օրէն իսկ
յայտնապէս հակառակած է կրօնքի ,
բարոյականի եւ աստուածապաշտու-
թեան : Ետեւեւր՝ եթէ ոչ ամենքը՝ ա-
նոնցմէ որոնք այդ շարժումին վար-
դապետութիւնները եկած են հոս տա-
րածելու անբարոյական կեանքով ու
հեթանոս հաւատքով մարդիկ եղած են :
Իրենց ազդեցութեան տակ ինկողնե-
րը գրեթէ միտքի կերպով վեա-
սուած են , եւ զէպի կրօնական կեանք
մը նախապէս ցոյց տրուած ունէ ձգ-
տում արագօրէն արմատախիլ եղած է :
Յայտնի համարձակ քարոզած ու գոր-
ծադրած այն են՝ թէ նպատակը կարգա-
բացնէ միջոցը : Գողութիւն եւ աւա-
ղակութիւն չափազանց սովորական
դարձած են : Նոյն իսկ մեր յարկերուն
վրայ յարձակած են երկու անգամ ,
շատ մը մարդերէ բռնի դրամ տուած են
սպաննակէքի եւ վախի տակ , եւ բա-
ւական ծանօթ հայեր ալ մահուամբ
պատժած են , անոր համար որ անոնք
չեն ուզած պէտք եղածին չափ իրենց
հլու հնազանդ գործիքները ըլլալ :
Եղբայրներ կաթողիկոսական տեղա-
պահ Արսէն վարդապետի եւ իր քա-
տուղարին , եւ անոնցմէ զատ , ուրիշ
մէկ քանի առաւել կամ նուազ ծանօթ
հայերու սպաննակութիւնը յայտնի կը
ցուցնէ թէ այս ընթացքները կը շա-
րունակուին դեռ : Անոնք՝ վերջապէս՝
հասարակութեան մէջ մտցուցած են
տեսակ մը բարոյական արտավարա-
կում , զոր տառնեակ տարիներու կրօ-
նական աշխատութիւն մը չպիտի կըր-
նայ մաքրել : Երկրորդ ժողովուրդին
քաղաքական վիճակը՝ փոխանակ բա-
րեկիսուելու՝ տառնապատիկ վառ-
թարացած է՝ այդ շարժումին ազդե-
ցութիւնը հակակշիռու համար կառա-
վարութեան ըրած քանքերէն : Այսօ-
րուան եւ երեսուն տարի առաջուան
պայմանները բազմապէս քիչ , եւ պի-
տի անսնէ թէ այն տառնուան հայե-
րուն թուոյն կէսին չափ միայն հայ
կայ հիմայ վերջիններէն մէջ եւ անոնց
ունեցած կալուածները՝ այսօր՝ մէկ
տառնեւորդն իսկ չէ նոյնիսկ ասկէ
տառնեւորդ տարի առաջ իրենց ու-
նեցածին : Այսօր ճամբորդութիւնը նը-
ւազ ապահով եւ Գերտերու հարստա-
հարութիւնը շատ աւելի է : Ինձի կը
թուի թէ այսքանը բաւական է արդէն
զատապարտելու գրգռումի քաղաքա-
կանութիւնը , եւ կապացուցանէ թէ
անիկա գոյութիւն ունեցող շարքնե-
րու դարմանը չէր : Այդ ուղղու-
թիւնը եթէ շարունակուի , պիտի
սաստակացնէ՝ ապագային մէջ՝ ինչպէս
անցելոյն մէջ՝ հայ ժողովուրդին դժո-
ւարութիւններն ու անոր բնաջնջու-
մին պիտի առաջնորդէ :
Կը հաւատամ որ ամէն մարդ պի-
տի տեսնէ թէ այս դրութեան շար-
ժառիթը երկու կողմին ալ լաւա-
գոյն չահերը ապահովելու անկեղծ
փափաքը եղած է :
Մէկ կողմէն կայ թուրք կառավա-
րութիւնը , որուն լաւագոյն չահն
է անշուշտ պաշտպանել իր հպատակ-
ները , տալ անոնց արդար օրէնք-
ներ , որպէսզի անոնք կարող ըլ-
լան տուրքերու միջոցաւ՝ գոհացոյցի
եկամուտը բերել կառավարութեան :
Վանի վերջիններէն այն մասերուն մէջ
ուր թուրք կառավարութիւնը հար-
կադրած է հայ ժողովուրդը տեղ
տալու քերտ բնակչութիւններու ,
ոչ թէ միայն տուրքերու հասոյթ .

ները մեծապէս նուազած են , հսկա օ-
րինաւորապէս պարտական եղած տու-
րքերու մէկ շատ պզտիկ մասը կը հա-
ւաքուի : Եւ այսպէսով վերջիններէն
եկամուտը շատ ծանր հարուած մը
կրած է : Հայերը թուրքոյ ամենէն
փափաքելի ու արդիւնաբեր ցեղը պիտի
ըլլան՝ եթէ կառավարութիւնը արդար
կերպով վարուի անոնց նկատ
եւ զանոնք ազդուապէս պաշտպանէ :
Միւս կողմէն՝ Հայերը չեն կրնար
գտնել ուրիշ ունէ անոնց ու հաւա-
նականաբար կարենան վայելել այն-
քան առանձնաշնորհումներ ու ա-
ռիւնիք եւ ուր պիտի կրնալին այն-
քան ընդարձակօրէն պաշտպանել իրենց
աղքատին կազմակերպութիւնն ու կը-
րծաքը , Ռուսիոյ մէջ աղքատի առանձ-
նաշնորհումներ հեռագնեւ տեղի կը
կրճատուին հայերուն համար , եւ
անոնք որոնք արեւմտեան Երկիր-
ները կը գողթնին իսկոյն կը ձուլուին
հոն եւ կը կորսնցնեն ամեն աղքատին
կազմակերպութիւն :
Յեղափոխական այս մեթոտներուն
հակառակ դադարաւ յայտնելով մեր
նպատակն է քանայ հեռացնել ինչ որ
վիստած է ժողովուրդին՝ փոխանակ
օգնելու , որպէսզի կարելի ըլլայ ա-
ւելի յոյսատու եւ աւելի ձեռնառու
միջոցներ գտնել :
Կ. Ս. ՐԷՅԵՆՍ
29 Դեկտ . 1904
ՎԱՆ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Աղք. Ընկերութիւնս չնահալու-
թեամբ ստացած է հետեւեալ նուէր-
ները .
Ազն. Տիկին Ս. Հ. Թորոսեանէ ի
Վրտին բարեկեցիկ ատիլ 10 Քր.
Տ. Յակոբ Նալչաճեանի
մահուան ատիլ 20 Քր.
Ազն. Տառնուան բնառ-
նիքն Ս. Ջառիկ չնոր-
հաւորական այցելութիւն-
ներ իրենց կողմէն չը փութա-
նալուելու համար 10 Քր.
Ի Դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Ազապաւ Մ. Գարագաշեան
12 ապրիլ 1905
Վանա

ԱԶԳԱՅԻՆ

Տ. Եղնիկ Եպիսկոպ. Ապահովելի
Գահիրէ մուտքը շատ շրեղ եղած .
Դիմաւորելու համար կայարանը
խռնուած են պաշտօնական եւ ան-
պաշտօն հարկաւոր տղաքային-
ներ , որոնք 60 կառքերով հետե-
ւած են Ն. Սրբազնութեան մին-
չեւ եկեղեցի :
—Վանա. Պոլսոյ փաշա Նուպար
Եգիպտական կառավարութեան
կողմէն ներկայացուցիչ կարգուած
է մայիս 28 ին Հռոմ գումարուե-
լիք Երկրադորական միջազգա-
յին համաժողովին :
—Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին
Սուլթանէն սահմանուած է 2250
զրչ. ամսաթուղակ որ պիտի վճա-
րուի Ատանայի կառավարական

գանձէն: Այս մասին հրամանա-
գիրը վաղիկն և կաթողիկոսին
ղրկուեցէ:

—Ամենայն Հայոց կաթողիկո-
սը գիտումները բաժնէ Պարսից
հաշին և կառավարութեան որ
պաշտպանուն Պարսկաստանի հա-
յերը, միւս հարկերի տոներու մի-
ջոցին մանաւանդ, իսլամ մոլե-
ռանդներու գէմ որոնք գրգռուած
ըլլալ կը թախին Պագուի գէպքե-
րէն ազգուելով: Դաւթբէկի գա-
հաժառանգը համակրալից և վըս-
տահեցուցիչ պատասխան տուած
է:

—Դերասան Տ. Լ. Պէնիւան
Վառնա եկած լինելով կը լսենք
թէ Տ. Պապանանի հետ համաձայ-
նութիւն գոյացնելու վրայ են,
ըստնուած երկու գերաստանական
խմբակները միացնելու համար:

Կ Ի Ր Ի Տ

Էրաքլիօն հիւքիւմէթի հիւ-
քիւմէթի մուվազգաթէ նամը ի-
ւէ կիրիտին Եունանիստան իւէ
պիրլէմէսի մուտտէսինտէն տո-
ւայը մէճլիսի ումումի տալէթ
իթմիշ օլարագ, սիւրալը 50,000
քիշի թօրլանտըլար, վէ Եունա-
նիստան իւէ պիրլէմէսի իւան
իթմիլէթ: պու գարարտան սոնրա
այինը բուհանիէ իճրասը իւէ հա-
ղըր պուլլանալար թէմամէն մագ-
սէտլէրինէ վասըլ օլմաղըգճա
թէրքի սիւրալ իթմէյէճէքլէրինէ
եհմին էյլէտիլէթ:

Պունուն իւլէրինէ Մ. Պիրա-
քիս հիւքիւմէթի մուվազգաթէ
նամընա իտարէնին ըրյաթէթինի
տէրէօնտէ էյլէտի և եհնի թէշ-
քիլ օլլանաճագ հիւքիւմէթինթան.
զիմի իշիւն պիր էմիրնամէ նէշը
իթմի: Ասըլար Մինսօ չէհրինի
տախի զապլ իթմիլէթ: Շիմտի
եալընըլ Խանհա, Բէթիւմ վէ
Սուտա չէհրլէրի Բրէնս Եօրկի-
նին իտարէսի ալթրնտա պուլլ-
նուպ, ատանըն տախիլի զըսմը
ասըլարըն մուվազգաթ հիւքիւ-
մէթինէ թապի տիր:

Ատանըն տախիլինտէ իշլէր պու
մէքքէլտէ իքէն, խարիճտէ վէ
Եունանիստանտա մէսէլէնին նէյէ
միւնճէր օլաճաղը էլան պիրլինմէ-
յօր: Մ. Տէլիեանիս՝ Սթինա
մէճլիսի մէպուսանընտա՝ կիրիտ-
իլէրին թուլթըղը թարիգէ
հէմէֆքեար օլմաղըղըն սէօյլէ
յուպ տէմիշ տիր: Էղիրա պու
եօյլէ կիրիտլէ պիրլէմէմիլ ու-
զուն միւտտէթ թէթիսի օլլանա-
ճագ տըր: պէն մէպտէն պիր-
լէշէկէ թարաֆտարըմ, ֆաղաթ
շիմտի շու էսնատէ պու մէսէլէյէ
զուլվէթ վէրէմէմ:

Մ. Տիլիեանիսին պու պէյա-
նաթընտա պաշգա մագսէտ հըսս
իտէյօրըլ: Եանի Եունանիստան
իշիւն կիրիտ հաղըր պիր լօգմա
օլուպ, էր վէ կէճ քէնտիլէրնին

տիր: ֆաղաթ պու կ'էն Մաքէ-
թոնիա մէսէլէսի մէյտանտա ի-
քէն՝ կիրիտ սէպէպի իւէ Սուլ-
թանլէ պօղուշմագ Բուվարըն
իշլէրինէ եարամայօր:

Տ Ա Ի Ի Լ Ի Է

Բրէնս Ֆէրահնանտըն էվրո-
րա բախթախարընա սէյահա-
թընտան պահս իտուպտէ՝ անըն
գրալիյէթ իւան իթմէք էֆքեա.
ընտա պուլլանաղընը եազմագ-
տա օլան էճնէպի ճէրիտէլէրինէ
ճէվապէն, «նօվի վէք» Սօֆիա
կազէթասը տէյօր: «Բրէնսին
շիմտիլէք օ՝ եօլտա պիր մագսէ-
տի եօգ տըր: Պուկարիանըն նա-
մէն Սուլթանա թապի (վասալ)
օլմաղը Բրէնսին վէ քէնտի հիւ-
քիւմէթինին սէրպէստիյէթինէ
վէ թէթիլէրինէ ասլա մանի տէ-
կիլ տիր վէ Շարգ մէսէլէլէրին-
տէ Պուկարիանըն էհէմմիյէթի
տէրէճէթի պալատա տըր:

—Մաքէթոնիատա Բուվարըն
Պուկարալարա գաղըլ իճրաի մէ-
զալիմ իթմէլէրինտէն տօլայը
չէհրիմիլտէ թէճէմիլ օլլան
միթիլիկին պէյանը Սօֆիատա,
էլէնատա, Թրնօլատա, Պօրիս-
կրատա, վէ Ֆիլիպէտէմիլիկլէր
օլմուշ տըր: Ֆիլիպէտէքի մի-
թիլիկ տիկէլէրինէ նիսպէթէն
բէք հիտտէթ հասըլ իթմիշ տիր:
էօյլէքի 7-8000 քիշի թօրլան-
մըլ օլարագ՝ նուլթըլար պիրթ-
տիքտէն սօնրա պիր թաղըմ
Մաքէթոնիալըլար Ձէրվէն-Բագ,
Ագրօքլիս, Մէթրօքլ նամ բուժ
գահվէլէրինէ կիտուպ ճամլարը
գըրմըլար վէ պիր գաշ բուժ
տէօյմիլէլէր: Քէշա մէղքիւր ա-
լայ Եհնի մահալէյէ կիտուպ 3
բուժ գահվէլէրինտէն Բուվարը
տաղըլար, ճամլարը գըրար-
լար վէ պաղըլարըն տախի
տէօյլէրէր: Բօլիսլէր բէք միւշ-
քիւլաթլէ էհալի տաղըլըլար:
պու էսնատէ պիր ժանտարմա
պաշընտան աղըրճա եարէլէնիւր:
Ֆրանսըլ գօնսօլորը գալատը
վէ սէքրէթէրի իւէ պէրապէր
Ագրօքլիս նամ գահվէլէ կիտուպ
խատարաթը թահգիլ իտէր:

Իշպու ուլիոննըլըլըն էօնիւ-
նիւ ալմագ իշիւն հիւքիւմէթ
սայ ու զայլէթտէ գուսուր իթ-
մէմիշ տէյօրլար:

Մ Ո Ի Հ Ա Ր Է Պ Է

Պալթիկ տօնանմաընըն ֆը-
րանսըլ միւլթէմէլէքեաթը սա-
հիլէրինտէ պուլլանաղընա գար-
շը ճաբօն տէվլէթի միւլայիմանէ
սուրէթտէ բրօթէսթ իթմիշ տիր:
Ֆրանսա հիւքիւմէթի տէրհալ
բուս խարիճիէ նաղըլընըն տըր:
գաթընը տալէթլէ, ալիարալթ-
տէթվէնսքիլին պիրա թէթիլի
Քօշիլին սուլարընտան չէքիլմէ-

սինին իգթիլասընը՝ վէ թէթ-
իսրաթըն վախիմ նէթիճէլէր
հասըլ իտէպիլէճէկինի պիրտի
միշ տիր:

Բուս տօնանմաընըն Գամարա
ատասընը մէքքէլի հարպիյէ ին-
թիսապ իտէճէկինէ տայիր շա-
յի օլան հալատիս թօքթօտա Ֆը-
րանսայա գարշը պէօյիկ վէլ-
վէլէ հասըլ իթմի: ճաբօն կաղէ-
թալարը պիրթարաֆըլ գաիտէ-
սինին ահքեամըն Ֆրանսա թէ-
ճալիւլ իտէյօր տէյուպ, Ֆրան-
սըլարա գաիլը թէհտիտաթըլ
պէնտլէր եազմայա պաշլատըլար:
Ֆաղաթ Թօքթօ հիւքիւմէթի
Բարիքտէքի էլիսի վասըլթաը
իւէ Ֆրանսա իւէ միւլէքէրէտէ
օլուպ, հէր հալտէ պիր թարաֆ-
լըլը մուհաֆազա իթմէք իշիւն
թէթիլէնաթ վէրիլէճէկինէ իւ-
միւլար պուլլանաղըլ հասէպի
իւէ էհալիսին վէ կազէթալարը
սիւքիւնէթէ տալէթ իթմէքտէ
տիր:

—Բուս տօնանմաընըն ֆը-
րանսըլ սահիլէրինտէն իրագ
կիթմէսի իշիւն խարիճիէ նա-
ղըլը Մ. Տէլքատէ Սայլոն հիւ-
քիւմէթինէ էմիրնամէ եօլմաղը
օլմաղլէ, ճուճա էրթէսի կիւնիւ
բուս վաբօրլարը Գամարահան չէ-
քիլմիշլէր:

—Իշիւննի բուս տօնանմաըն
թահմինէն 1-2 կիւն զարֆըն-
տա Բօթտէթվէնսքի պիրլէշէ-
ճէք տիր:

—«Բուսքէ Սլօլ» կազէթա-
նըն իսպարը իւլրէ, Մանչուրիա-
տա բուս զապլթ վէ ասքէրլէ-
րինտէն չօղլարը տէլի օլմագտա
ըմըլար:

—Խարպիլտէն պիրտիլիտի-
կինէ նաղարէն, Վատիվօստօք
վէ Խարպիլ պէյնիտէ ճաբօն-
լար իսթիքեամլարը գալիլէշ-
տիրմիշ օլարագ, եագընտա հիւ-
ճուճա պաշլայաճագլար կէօրիւ-
նիյօր:

—Բուս տօնանմաըն Գամարա
քէօրֆէլիտէն չէքիլտիքտէն
սօնրա՝ տէնիլ աղըլարընտան
թօք սէսլէրի իշիտիլիշ օլտըլը
«Թան» եաղըլար:

—Ամիրալ Թօլօնըն վաբօրլա-
րը Ֆօրմօզա ատասը ճիվարընտա
թօրլանըլարը ըմըլ:

—«Բըթի ժուրնալ» Բէթէրա-
պուրկտան իշար օլլանըլը իւլ-
րէ, Բօրթ Արթուրըն թէսլիմի
մէսէլէսինին մուհաքէմէսինէ
մէմուր գըլլանան գամիսիօնը
մախուս ժէնէրալ Շթօսէլի
գապահաթըլ պուլլուշ: ֆաղաթ
մէղքիւր գամիսիօնը գարարը
ամիրալ Ուլէքիլէվէ վէ ժէնէրալ
Քուրօքաթքիլնէ գարշը բէք չէ-
տիտ օլաճագ կէօրիւնիյօր:

Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Ի Յ Է

ՎԱՌՆԱ,	Ապրիլ 13
ՉԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՑ	
Վալօն 54-60 լիպ. 9.50 / 11.70	
Արապա 52-62 լիպ. 9. / 12 10	
ԱՐՅԱ,	
Վալօն 100 քիւս հին 11. / 11. 20	
Արապա 42-45 լիպ. 6. / 6. 60	
ԵՈՒԼԱՅԱՐԱՅԱ 33/36 լպ. 5. 20/5.70	
Վալօն 100 քիւս 10. 60/10. 75	
ՅԱՍՈՒԼԵԱ 100 քիւս - 25--27	
Արապա 100 քիւ. 22--24	
ՏԱՐԸ արապա հէքթ. 14--15	
ԳՕԼՕՁ արապա 55-60 լպ. 10. 50/12	
ՄԻՍԻՐ 57-58 լպ. 7. 20/8. 80	
« 100 քիւս 11. 20 - 11. 90	
ՉԱՎՏԱՐ արապա 7 70 / 8. —	
« 100 քիւս 11. / 11. 50	
Կիւնտէ 15 - 20 վալօն վէ 80 — 100	
արապա կէլմէքտէ, վալօն մուլմէլէսի նալօլէտն 20 ֆր. արապա մուլմէլէսի նալօլէտն 20. 20 :	

ՍՍՐԱՅԻՅԷ

Նարոլէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիբարը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա բիւցտարնտա պազգալիյէ մալլէլին պու կիւնքի ֆիլպիլը, ալթուն ֆրանք իւէ:	
ԳԱՀՎԷ 1,95/2 10	
Շէֆէր նէմյէ 80	
Շէֆէր քէսմէլ սանարգ 40.	
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ շուվալը 45 .	
» Ճապոն » 35 .	
» Ինկիլիզ » 28.50	
» Բիզոն » 50	
ԿԱՁ, սանարգը 9. 30	
Չէթիլի եաղը քիւս 85.—1	
ԳՈՒՐՈՒԼԵԳԵԼ 25	

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՃ
ՀԱՅԿԱԿԵՆ Լիկորըլ սնդամ տպագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.
ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուկար-
նիստ նիստ ու կացը ու թուրքիէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թիւնէն առաջ. Գին 50 սանգիմ
ՀԱՅԲԵՆԻԿԱՐ ՋՈՋԵՐ Պատկեր
մը ճաճկահայաստանի յիբրական կիսն-
գէն: Ձեռնիւլ գին 1 ֆր.
Այս գրքերը սաանալու համար դիմել
ՎԱՌՆԱ «Ի ր ա ու ն ք» ի խմբագ-
րութեան
ՍՕՅԻԱ Տ. Օնիկ Գարսեւանի
ՊՈԻԳԻՇ Տ. Օնիկ Փափաղեանի
Եւ Տ. Յ. Պիպէճեանի
ԲՕՆՍԹԱՆՑԱ Տ. Սիւսակ Մէլքեանի
ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի
ԱՂԻՔԱՆԻՐԻՍ Տ. Ստեփան Մագ-
մանեանի
ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանգ-
եանի
ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանաղի
ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեանի

Ա Ձ Դ

Տ. Տօք. Թորոնսան վերջնականա-
պէս քաղաքս հաստատուած լի-
նելով կընդունի ամէն տեսակ հի-
ւանդներ կէսօրէն վերջ ժամը 2 էն
մինչեւ 4:
Տոնավաքս փողոց թիւ 3